ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 75 - 76 (16674) ՇԱԲԱԹ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն աշխատանքային այցով մեկնեց ԱՄՆ:

Վրաստանի վարչապետի կարգավիճակով Մամուկա Բախտաձեն, ԱՄՆ կատարած իր տասնօրյա անդրանիկ այցի շրջանակներում, հանդիպումներ ունեցավ ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության հարցերով օգնական Ջոն Բոլթոնի. ԱՄՆ-ի պետքարտուղար Մայքլ Փոմպեոյի, սենատոր, Հելսինկիի հանձնաժողովի նախագահ Ռոջեր Ուիկերի, սենատորներ Բոբ Քորկերի, Բոբ Մենդեսի, Հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԵԱՀԿ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՐՑԵՐԸ

Սեպտեմբերի 18-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գերագույն հանձնակատար Լամբերտո Զանիերիի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ նրանց երկրի հանրային ու քաղաքական կյանքին ինտեգրման տեսանկյունից Վրաստանում առկա իրավիճակը:

Կողմերը Վրաստանում ազգային փոքրամասնությունների պաշտպանության համատեքստում ուշադրությունը բեւեռեցին կրթության համակարգի բարեփոխման վրա: Իրակլի Կոբախիձեի խոսքով, Վրաստանի վարչապետի առաջնահերթությունը կրթությունն է, եւ, համապատասխանաբար, իշխանությունը համակարգում նախատեսում է իրականացնել մասշտաբային ներդրումներ:

Խոսքը վերաբերել է նաեւ Լամբերտո Զանիերիի՝ Աբխազիա նախատեսված այցին, բռնազավթված տարածքներում առկա ծանր իրավիճակին մարդու իրավունքների տեսանկյունից եւ Վրաստանի կառավարության խաղաղարար նախաձեռնությանը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 18-ին լրացավ նախագահական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած թեկնածուների կողմից ընտրողների ցուցակների ներկայացման ժամկետը:

Վրաստանի ընտրական օրենսդրության համաձայն, նախագահության թեկնածուներն ընտրություններին մասնակցելու իրավունք ստանալու համար ԿԸՀ-ին պետք ներկայացնեն իրենց աջակիցների 25 923 ստորագրությունները: Ինչպես հայտա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ՝ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի հանրային բոլոր դպրոցներում մեկնարկեց նոր՝ 2018-2019 ուսումնական տարին: Երկրի 2082 հանրային ու 221 մասնավոր դպրոցները, 36 պետական եւ 71 մասնավոր մասնագիտական ուսումնական հաստատությունները, 20 պետական եւ 48 մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները իրենց դռները բացեցին աշակերտների ու ուսանողների առջեւ:

Նոր ուստարին երկրի ողջ մասշտաբով 152 կրթօջախներ դիմավորեցին վերանորոգված դպրոցներում, ընթացքի մեջ է եւս 27 նոր դպրոցների շինարարությունը: Դրանք շահագործման կհանձնվեն այս ուսումնական տարում:

2018-2019 ուստարին բացառիկ է հանրային դպրոցիների 50 232 եւ մասնավոր դպրոցների 5892 աշակերտների համար, ովքեր առաջին անգամ հատեցին դպրոցի շեմը: Բոլոր առաջին դասարանցիներին տրվեցին նոուբբուքեր:

Նոր ուստարվա առթիվ, դպրոցների սաներին, ուսանողներին, ուսուցիչներին եւ ծնողներին շնորհավորական ուղերձներ հղեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, կրթության, գիտության, սպորտի ու մշակույթի նախարար Միխեիլ Բատիաշվիլին:

(Խորագրի շարունակությունը՝ 4, 5, 6, 7-րդ էջերում)

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին Հայաստանն ու համայն հայության նշեց անկախության հռչակման 27-րդ տարեդարձը: Ըստ ավանդության, այդ օրը պետության ղեկավարները, քաղաքական կուսակցությունների ու երկրի հանրության ներկայացուցիչներն այցելեցին «Եռաբլուր» պանթեոն, ծաղկեպսակներ դրեցին ղարաբաղյան պատերազմում զոհված մարտիկների շիրիմներին:

Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում, 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, եւ հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Քայլի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սեպտեմբերի 21-ին Թբիլիսիում, Վրաստանում Հայաստանի դեսպանության կազմակերպմամբ, Ռուսթավելու պողոտայում գտնվող Երիտասարդական պալատում, անցկացվեց պաշտոնական ընդունելություն՝ նվիրված Հայաստանի Անկախության 27-րդ տարեդարձին:

Միջոցառմանը, որտեղ ելույթ ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, ներկա էին Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ղեկավարներ, երկրում գործող միջազգային եւ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաեւ վիրահայ համայնքի տարբեր երկրամասերը ներկայացնող ներկայացուցիչներ, մտավորականներ:

Իր խոսքում, դեսպանը խոսեց Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունների, երկրի առջեւ ծառացած մարտահրավերների մասին: Նա մասնավորապես անդրադարձավ հայ-վրացական հարաբերություններին՝ ընդգծելով երկու երկրների միջեւ փոխայցելությունների արդյունքների վրա խարսխվող զարգացման դինամիկան:

Շնորհավորանքի եւ ողջույնի խոսքով հանդես եկավ Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Գիորգի Շարվաշիձեն:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի նախաձեռնությամբ, կազմակերպվել է Վրաստանում հավատարմագրված դեսպանների ճանաչողական այցը Հայաստան:

Այցի շրջանակներում, սեպտեմբերի 15-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված Ավստրիայի, Չինաստանի, Ճապոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Իրանի, Լեհաստանի, Ղազախստանի, Շվեդիայի, Ուկրաինայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների արտակարգ եւ լիազոր դեսպանների, Սուրբ Աթոռի Առաքելական նվիրակի, Շվեյցարիայի դեսպանության, Վրաստանում ՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՅԱՑԱՎ ԱՆԿԱԽ ԹԵԿՆԱԾՈՒ ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԻ ԲԱՑՄԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Սեպտեմբերի 17-ին Թբիլիսիում, Առաջին հանրապետության հրապարակում, անցկացվեց նախագահության անկախ թեկնածու Սալոմե Զուրաբիշվիլու ընտրական շտաբի բացման շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն, կառավարող կուսակցության այլ ներկայացուցիչներ:

Շնորհանդեսին Սալոմե Զուրաբիշվիլին ներկայացրեց իր նախընտրական ծրագիրը՝ նշելով, որ ծրագրի շատ կետեր, կանխամտածված խեղաթյուրվում են ընդդիմախոսների կողմից, ինչը թյուր պատկերացում է ստեղծում նախագահության թեկնածուի սկզբունքային դիրքորոշման մասին:

Նախընտրական քարոզարշավի շրջանակներում, Սալոմե Զուրաբիշվիլին այցելել է Քութայիսի, Ամբրոլաուրի, որտեղ հանդիպումներ է ունեցել տեղի բնակիչների հետ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարեց ԿԸՀ-ի մամլո խոսնակ Աննա Միքելաձեն, սահմանված ժամկետում ԿԸՀ-ին աջակիցների ստորագրություններով ցուցակները ներկայացրել են նախագահության թեկնածուի հայտ ներկայացրած 46 սուբյեկտներից (20-ը առաջադրվել էր քաղաքական կուսակցությունների, 26-ը՝ նախաձեռնող խմբերի կողմից, 25-ը՝ 19-ը քաղաքական կուսակցություններից, 6-ը՝ նախաձեռնող խմբերից): Նշենք, որ ԿԸՀ-ի կողմից գրանցման հարցում մերժվածների թվում է նաեւ անաչված կինոռեժիսոր Գիորգի Շենգելիաան:

Նախագահության թեկնածուների գրանցման վերջնական որոշումը ԿԸՀ-ն կընդունի ստորագրությունների հավաստիության ստուգման արդյունքներով: Վրաստանի նախագահի թեկնածուների վերջնական ցուցակը հայտնի կդառնա սեպտեմբերի 28-ին:

Սեպտեմբերի 17-ի դրությամբ, ԿԸՀ-ն որպես նախագահի թեկնածու արդեն գրանցել է 9 սուբյեկտի:

Վրաստանի նախագահական ընտրությունները նշանակված են հոկտեմբերի 28-ին:

ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՁԵԻ ԵՎ ԳՐԻԳՈԼ ՎԱՇԱՁԵԻ ՆԱԽԸՆՏՐԱՐՇԱՎԸ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ԾԱԼԿԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում, «Եվրոպական Վրաստան» կուսակցությունից նախագահի թեկնածու Դավիթ Բաքրաձեն եւ «Քաղաքացիական շարժում - ուժը միասնության մեջ է» միավորման կողմից առաջադրված թեկնածու Գրիգոլ Վաշաձեն այցելեցին Ախալքալաքիի եւ Ծալկայի մունիցիպալիտետի բնակավայրեր:

Այցի շրջանակներում, Գրիգոլ Վաշաձեն մունիցիպալիտետի Դիլիսկա, Կուլիկամ գյուղերում եւ Ախալքալաքիում հանդիպեց բնակչության հետ եւ կոչ արեց հոկտեմբերի 28-ին քվեարկել իր օգտին:

Մինչ այդ, նախընտրարշավի շրջանակներում, Ախալքալաքիում էր գտնվում «Եվրոպական Վրաստան» կուսակցության կողմից առաջադրված նախագահի թեկնածու Դավիթ Բաքրաձեն:

Հանդիպմանը ներկա նախագահի թեկնածուները հույս հայտնեցին, որ Ախալքալաքիի, Նինոծմինդայի եւ մյուս շրջանների բնակչությունը ակտիվորեն կմասնակցեն ընտրություններին ու կկատարեն իրենց ընտրությունը փոփոխությունների համար:

Նշենք, որ, քարոզարշավի շրջանակներում, Դավիթ Բաքրաձեն եղավ նաեւ Ծալկայում, հանդիպում ունեցավ տեղի բնակիչների հետ:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մաշխարհային բանկի նախագահ Ջիմ Յոն Կիմի, Արժույթի միջազգային հիմնադրամի կարգադրիչ-տնօրեն Քրիստին Լագարդի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տնօրեն Մարկ Գրինի եւ այլ պաշտոնատարների հետ: Վրաստանի կառավարության ղեկավարը ելույթ ունեցավ նաեւ սեպտեմբերի 18-ին Նյու Յորքում աշխատանքն սկսած՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանում:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի եւ ԱՄՆ պետքարտուղար Մայքլ Փոմպեոյի հանդիպմանը կողմերը քննարկեցին պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության զարգացման ու երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների խորացման հարցերը: Կողմերը խոսեցին նաեւ երկկողմ հարաբերությունների գլխավոր ուղղությունների, Վրաստանի առջեւ ծառացած մարտահրավերների, ինչպես նաեւ բռնազավթված տարածքներում իրավիճակի մասին:

ԱՄՆ պետդեպարտամենտում կայացած հանդիպմանը ներկա էին Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Զալկալիանին եւ ԱՄՆ-ում Վրաստանի դեսպան Դավիթ Բաքրաձեն:

Մամուկա Բախտաձեի եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ազգային անվտանգության հարցերով օգնական Ջոն Բոլթոնի հետ հանդիպմանը կողմերը քննարկել են տարածաշրջանի իրադրությունը, երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու երկկողմ ռազմավարական հարաբերությունների հարցեր:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵԿ ՏԱՐՈՎ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ԱՎՏՈԾԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ՑՈՐԵՆԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը որոշում էր ընդունել սեպտեմբերի 15-ին երկրի ավտոծանապարհներով ցորենի փոխադրումներն արգելելու վերաբերյալ:

Որոշման մեջ նշված էր, որ սեպտեմբերի 15-ից արգելվում է ավտոմոբիլային ճանապարհներով ալյուրն ու ցորենը Վրաստանի տարածք ներկրելը կամ Վրաստանի մաքսային տարածքից արտահանելը: Դա թույլ էր տրվում միայն երկաթգծի միջոցով կամ ծովային տրանսպորտով:

Կառավարության վերոնշյալ որոշումը որոշակի բողոքի ալիք առաջացրեց Վրաստանի բեռնափոխադրումներով զբաղվող ընկերությունների եւ մասնավոր վարորդների շրջանում: Մասնավորապես, մեծ բեռնատարների (ֆուռ) վարորդների բողոքի ցույց սկսեցին Թբիլիսիի Լիլո ավանում գտնվող, Վրաստանի եկամուտների ծառայության գրասենյակի հարակից տարածքում: Մինչ այդ, վարորդները բողոքի ակցիա են անցկացրել երկրի ֆինանսների նախարարության մոտ:

Որոշման կիրակման նախօրեին՝ սեպտեմբերի 14-ին, հայտնի դարձավ, որ Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու հրամանով հետաձգվել է ավտոծանապարհով ցորենի եւ ալյուրի ներկրման արգելքի վերաբերյալ հրամանագրի կիրառումը:

Նախարարի այդ հրամանի համաձայն, հացահատիկը բեռնատարներով տեղափոխելու արգելքը, սեպտեմբերի 15-ի փոխարեն, ուժի մեջ պետք է մտներ հոկտեմբերի 1-ից:

Բայց, սեպտեմբերի 19-ին բողոքարկող բեռնատար մեքենաների վարորդները հանդիպում ունեցան ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու հետ: Ֆինանսների նախարարի՝ համատեղ ուժերով խնդրի լուծումն ապահովելու նպատակով առաջարկած եռամսյա վերջնաժամկետը, այսինքն՝ մինչեւ տարվա վերջ ներմուծման-արտահանման թույլտվությունը չբավարարեց վարորդներին եւ բողոքի ակցիան ավելի լայն ծավալ ընդունեց: Արդյունքում, ֆինանսների նախարարությունը որոշում ընդունեց զիջել, եւ երեկվա՝ սեպտեմբերի 21-ի նախարարի հրամանով, ավտոտրանսպորտային միջոցներով ցորենի եւ ալյուրի ներմուծման-արտահանման արգելքը հետաձգվում է մեկ տարով՝ մինչեւ 2019 թվականի հոկտեմբերը:

Ավելացնենք, որ վերոնշյալ որոշման կապակցությամբ, վրացական կողմի հետ հանդիպումներ են ունեցել նաեւ Հայաստանի կառավարության ներկայացուցիչները: Հանդիպումների արդյունքում, ըստ նախնական պայմանավորվածության, վրացական երկաթուղին հայաստանյան փոխադրողների համար կկիրառի զեղչային համակարգ, ինչի արդյունքում ակնկալվում է, որ փոխադրումների գինը չի բարձրանա:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ



ԱՄՆ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 73-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում անցկացվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի բացման պաշտոնական արարողությունը: Նստաշրջանը քննարկեց մարդու իրավունքների պաշտպանությանը, գենդերային հավասարությանը, հակամարտությունների կանխարգելմանն ուղղված հարցեր: Մինչեւ սեպտեմբերի 27-ը կքննարկվի, ընդհանուր առմամբ, 175 հարց:

Նիստին ելույթ կունենան նաեւ մասնակից երկրների ղեկավարները, որոնց թվում՝ նաեւ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, ով սեպտեմբերի 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբելայի 73-րդ նստաշրջանի մասնակիցներին կդիմի վրացերենով:

ՈՒԿՐԱԻՆԱ

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԶՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Սեպտեմբերի 17-ին Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն հրամանագիր է ստորագրել Ուկրաինայի ու Ռուսաստանի Դաշնության միջեւ բարեկամության, համագործակցության եւ գործընկերության պայմանագրի դադարեցման վերաբերյալ Ուկրաինայի Ազգային անվտանգության ու պաշտպանության խորհրդի որոշումը գործողության մեջ դնելու մասին:

ՍԻՐԻԱ

ԽՈՑԵԼ ԵՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԻԼ-20 ԻՆՔՆԱԹԻՌԸ. ԿԱՆ ՉՈՀԵՐ

Ռուսական Իլ-20 հետախույզ-ինքնաթիռը սեպտեմբերի լույս 18-ի գիշերը Միջերկրական ծովի վրա խփվել է Սիրիայի ՀՕՊ-ի համակարգով: ՌԴ պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Իգոր Կոնաշենկովը հայտարարել է, որ ինքնաթիռը հարվածի տակ են դրել իսրայելական կործանիչները: Միջադեպի հետեւանքով, զոհվել է 15 ռուս զինվորական: ՌԴ պաշտպանության նախարարությունում հայտարարել են, որ Իսրայելի գործողությունները գնահատում են՝ որպես թշնամական, եւ համարժեք պատասխանի իրավունք են վերապահում իրենց:

Իր կողմից, Իսրայելի պաշտպանության բանակում ափսոսանք են հայտնել, որ Իլ-20 ռուսական ռազմական ինքնաթիռը սիրիական ՀՕՊ-ի համակարգերով խոցվել է Միջերկրական ծովի վրա, բայց նշում են, որ իսրայելական կողմը միջադեպի համար պատասխանատվությունը դնում է Սիրիայի կառավարական ուժերի վրա:

ՎԻԵՏՆԱՄ

ՄԱՀԱՑԵԼ Է ՆԱԽԱԳԱՀ ՉԱՆ ԴԱՅ ԿՈՒՆԱԳԸ

Սեպտեմբերի 21-ին, Հանոյում, 61 տարեկան հասակում մահացել է Վիետնամի նախագահ Չան Դայ Կուանգը:

Ինչպես նշված է պաշտոնական հայտարարությունում, նախագահը պայքարում էր ծանր հիվանդության դեմ, սակայն, չնայած հայրենական ու արտասահմանյան առաջատար բժիշկների գործադրած բոլոր ջանքերին, այդպես էլ չկարողացավ ապաքինվել:

Նշենք, որ Չան Դայ Կուանգը Վիետնամի նախագահ էր դարձել 2016 թվականին:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոուզ Գոթմյոլերը:

Այցի շրջանակներում, Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղարի տեղակալը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, փոխվարչապետ, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի, փոխարտգործնախարար Դավիթ Դունդուայի եւ պաշտպանության նախարարի տեղակալ Լելա Չիքովանու հետ:

Գոթմյոլերը մասնակցեց պաշտպանության ինստիտուցիոնալ վերակառուցման դպրոցում անցկացվող կլոր սեղանին: Այցի շրջանակներում, վրացի ուսանողների առջեւ հանդես եկավ դասախոսությամբ, նաեւ մասնակցեց խաղաղության միջազգային օրվան նվիրված միջոցառումներին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ Է ԿԱՆՉՎԵԼ

«Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունը բժշկական եւ արտադրական նպատակներով Վրաստանից մարիխուանա արտահանելու մասին օրինագիծն այլեւս չի քննարկի:

Այս մասին տեղեկացրել է խորհրդարանի խոսնակ Իրակլի Կոբախիձեն: Նրա խոսքով, եկեղեցու եւ հասարակության բացասական վերաբերմունքի պատճառով «Վրացական երազանք»-ը որոշել է հետ կանչել օրինագիծը:

- Մենք լսում ենք ժողովրդին ու եկեղեցուն: Ելնելով այս արժեքներից եւ սկզբունքներից՝ մենք որոշում ենք կայացրել խորհրդարանից հետ կանչել նշված օրինագիծը: Ցավոք, հասարակության վերաբերմունքից օգտվել են որոշ չար ուժեր, որոնց հիմնական առանձնահատկությունը մարդու արժանապատվության հանդեպ անտարբերությունն է, ինչպես նաեւ իշխանությունների ու ժողովրդի բախումը, եկեղեցու դեմ նպատակաուղղված պայքարը եւ կրոնական զգացմունքները վիրավորելը: Մեծ հարգանք եմ տածում պատրիարքի հանդեպ, ում բոլոր քայլերն ու հայտարարություններն ուղղված են պաշտպանելու մեր երկրի եւ հասարակության շահերը: Բոլորին կոչ եմ անում՝ զերծ մնալ հարցի զգացմունքային շահարկումներից,- հայտարարել է խորհրդարանի խոսնակը:



ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՆՈՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Արդարադատության տներում նոր սպասարկում է ներդրվել Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնագաղթված եւ փախստական քաղաքացիների համար:

Այսուհետեւ, նրանց վերապահվում է բնակելի տան ստացման փախստականի կարգավիճակի ու նպաստների, ինչպես նաեւ սոցիալական հարցերի հետ կապված դիմումները Արդարադատության տանը ներկայացնելու ու համապատասխան սպասարկում ստանալու հնարավորություն: Փոխհամագործակցության նման հուշագիր ձեւակերպվեց Թբիլիսիի Արդարադատության տանը: Փաստաթուղթը ստորագրեցին փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարար Գրիգոլ Գիորգաձեն եւ Արդարադատության տան գործադիր տնօրեն Գիվի Ազաուրաշվիլին: Հուշագրի ստորագրման արարողությանը ներկա էր Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Բռնագաղթված անձինք նման սպասարկում կկարողանան ստանալ երեք քաղաքներում: Վրաստանի տարբեր երկրամասերում բնակվող փախստականները ստիպված էին առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության տարածքային միավորներին դիմել միայն այդ քաղաքներում, ինչը կապված էր նյութական եւ ժամանակի ծախսերի հետ: Հուշագրի ձեւակերպումից հետո, փախստականները Վրաստանի ողջ մասշտաբով կարող են դիմել անմիջականորեն արդարադատության տներին: Նրանց սպասարկումները կմատուցվեն երկրի ողջ մասշտաբով՝ Զուգդիդիում, Մեստիայում, Ախալցիխեում, Մառնեուլիում, Ղվարելիում, Բաթումիում, Ռուսթավիում, Քութայիսիում, Թելավիում, Գուրջաանիում, Օզուրգեթիում, Գորիում, Թբիլիսիում, Փոթիում, Թիանեթիում, Բորժոմիում, Ղազբեգիում, Լագոդեխիում եւ Օնիում:

Նշենք, որ Արդարդատության տանը, վերոնշյալ սպասարկումների ներդրմամբ, այդ օբյեկտների կողմից մատուցվող սպասարկումների թիվը հասավ 31 անվան:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՔՈՒԹԱՅԻՍԻԻՑ ԿՏԵՂԱՓՈԽՎԻ ԹԲԻԼԻՍԻ՞

Վրաստանի խորհրդարանը, լիագումար նիստերի ձեւաչափում, հաջորդ տարվա հունվարից գործունեությունը շարունակելու է հավանաբար մայրաքաղաքում: Կառավարող թիմում արդեն կայացվել է որոշում, որ օրենսդրական մարմինը լիովին վերադառնա Թբիլիսի: Համապատասխանաբար, կանոնակարգում, որի նախագիծը քննարկվում է այժմ, խորհրդարանի վայրը այլեւս Քութայիսին չի լինելու:

Ինչ վերաբերում է Քութայիսիում գտնվող շենքին, ապա այն, հավանաբար, կփոխանցվի ներքին գործերի նախարարությանը: Նախնական տեղեկությամբ, ՆԳ նախարարությունը նախատեսում է շենքում տեղակայել մի քանի ստորաբաժանում, այդ թվում՝ ոստիկանության ակադեմիա, 112 տեղեկատվական կենտրոն:

ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅԻՑ ՄԱՌՆԵՈՒԼԻ ՏԱՆՈՂ ԱՄԵՆԱԿԱՐՃ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թեթրիծղարոն այսուհետ Մառնեուլիին է կապվելու ամենակարճ ճանապարհով: 3,5 կմ երկարությամբ ճանապարհը, որն անցնելու է Մածեւանի գյուղով, տարիներ շարունակ անանցանելի է: Այս պահին ընթանում են ճանապարհի շինարարության ակտիվ աշխատանքներ:

Մածեւանի գյուղում նախատեսվում է կառուցել նաեւ արարողությունների տուն:

Թեթրիծղայում ենթակառուցվածքային նախագծերն ուսումնասիրել է Քվեմո Քարթլիի նորանշանակ նահանգապետ Շոթա Ռեխվիաշվիլին, հանդիպել Թեթրիծղարոյի չորս գյուղերի բնակչությանը եւ ծանոթացել նրանց խնդիրների հետ:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ ՎԱԼԵՐԻ ԲԳԱՆԲԱՆ՝ ԻՆՔՆԱՀՌՉԱԿ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 8-ին ինքնահռչակ Աբխազիայի կառավարության ղեկավար Գենադի Գագուլիան զոհվել էր ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով:

Ինչպես տեղեկացրել է «Sputnik Աբխազիա» գործակալությունը, սեպտեմբերի 18-ին ինքնահռչակ Աբխազիայի նախագահ Ռաուլ Խաջիմբան Վալերի Բգանբային նշանակել է հանրապետության վարչապետ:

Նշենք, որ, մինչ այդ, Վալերի Բգանբան զբաղեցնում էր ինքնահռչակ հանրապետության խորհրդարանի խոսնակի պաշտոնը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԱՊԱԳԱ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության եւ ֆինանսների նախարարության ակադեմիայի համատեղ ջանքերով, եկամուտների ծառայության աուդիտի դեպարտամենտի ստաժորների համար անցկացվել է հարկային օրենսդրության վարժանք:

Թեստավորման եւ հարցազրույցի արդյունքում, մրցույթի կարգով ընտրվել է 771 թեկնածու: Ստաժորներն անցնելու են ինչպես տեսական, այնպես էլ՝ գործնական դասընթացներ:

Դասընթացների նպատակը եկամուտների ծառայության աուդիտի դեպարտամենտում ստաժորների ինտեգրման, նրանց մասնագիտական զարգացման, գործնական ունակությունների մշակման եւ կատարելագործման աջակցությունն է:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 477 ԴԵՊՔ

Սեպտեմբերի 10-16-ը ներառյալ, Վրաստանի ֆինասների նախարարության եկամուտների ծառայության մոնիթորինգի դեպարտամենտի կողմից, երկրի ողջ մասշտաբով իրականացված վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 477 փաստ: Մասնավորապես, հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 2816 հարկատու: Ստուգման արդյունքում, վավերացվել են հետեւյալ օրինախախտումները. առանց ապրանքագրերի ապրանքի փոխադրման 81 փաստ տնտեսական գործունեության համար հարկատուների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման 21 դեպք եւ գանձարկղային սարքի չօգտագործման 375 փաստ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՔՍԱԱՆԵՆԳԱՅԻՆ ՍԻԳԱՐԵՏ

Սեպտեմբերի 18-ին «Կարմիր կամուրջ» մաքսային անցակետում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Ադրբեջանի քաղաքացի Ս.Պ.-ի ավտոմեքենան: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 600 գլանակ մաքսանենգային սիգարետ: Գործող օրենսդրության համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացուն սահմանվել է տուգանք՝ 1000 լարիի չափով: Մաքսանենգային ապրանքը բռնագրավվել է:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

ԻՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՒ ԱՇԽԱՐՀՈՎ ԱՊՐՈՂԸ...

...Այդ օրերից 40-ից ավելի տարիներ են անցել: Այսօր «ճամպրուկներով անցնողը» Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն է, ով սեպտեմբերի 12-ին նշեց իր 65-ամյակը: Նշեց իր իսկական ու անիսկական ընտանիքում՝ թատրոնում, սովորական ու արտասովոր օրերի նման:

ՕՐՈՐՈՑՍ, ԽՆՈՑԻՍ....

Թբիլիսիի հայոց թատրոնում նրա գործունեությունը սկսվեց 1975 թվականից, թեեւ այն, թե երբ սիրահարվեց թատրոնին, Արմեն Բայանդուրյանը չի հիշում: Կատակով, թե լուրջ թատրոնը հաճախ իր օրորոցն է համարում, համեմատում խնոցու հետ, որովհետեւ հենց նրա շուրջ էին ներկայանում իրենք՝ գյուղի երեխաները, «թատրոն-թատրոնի» «ներկայացումներով», որոնց փորձարանը Բայանդուրյանների փոքրիկ ու գողտրիկ տունն էր:

- Հայրս ու մայրս հողի մարդիկ էին,- ասում է Բայանդուրյանը:- Արդար քրտինքով տուն-տեղը շեն պահող: Այսօր էլ նրանք մտովի ինձ հետ են, իմ յուրաքանչյուր բեմադրության մեջ, թատրոնում, ամենուր...

Ավարտելով միջնակարգը՝ Ա.Բայանդուրյանը ակումբի վարիչ աշխատեց հարազատ գյուղում, ուսումնառեց Թեթրիծղարոյի շրջանի ակումբագրադարանային ուսումնարանում:

- Թբիլիսիի հայոց թատրոնի գլխավոր ռեժիսորն այդ տարիներին Հովհաննես Կարապետյանն էր,- թատրոնում իր առաջին քայլերի մասին պատմում է Ա. Բայանդուրյանը,- դերասանական հանճարեղ աստղաբույլով,- Դորի Ամիրբեկյան, Էմմա Ստեփանյան, Վեներա Հակոբյան, Ավետիք Սանոսյան, Ժիրայր Կարապետյան, Սերիկ Շեկոյան, Ասյա Ժամկոչյան, Արուս Ղարաչյան... սովորելու լայն ու բացառիկ հնարավորություն ունեի: Ուստի, մի քանի ամիս անց, ինձ գլխավոր դեր վստահեց Հայկ Ումիկյանն իր բեմադրության մեջ: 20-21 տարեկան էի: Հիշում եմ՝ ինչ-որ սրածայր կոճակ էի գտել եւ դրել ոտքիս տակ, որպեսզի ցավը թույլ չտար զգալ ոտքի դողը....

Հետո արդեն համարձակ քայլերով, Արմեն Բայանդուրյան դերասանը մարմնավորեց 80 դեր. Շիրվանզադեի «Չար ոգի» (Օսկան), Ֆլետչերի «Ինչպես կառավարել կնոջը», Գ, Սունդուկյանի «Պեպո» (Գիգոլի), Վ.Պետրոսյանի «Հիպոկրատի ծանր գլխարկը» (Գագիկ), «Չառլեի մորաքույրը» (Բաբս) եւ այլն: Իսկ 27 տարեկանում գրեց իր առաջին պիեսը՝ «Դատարկ օրորոցը»: Այնուհետեւ, գրվեցին մյուսները՝ «Կանչեցին» (Վ.Աճեմյանի անվան մրցանակ), «Ինքնանկար», «Աշնանային իրիկնամուտ», «Օրը անձրեւոտ» (Հունաստանի թատերական միջազգային փառատոնին առաջին մրցանակակիր)...



«...Նոր էի կարգվել որպես դերասան, բայց արդեն խաղացել էի Ֆեդոտովի «Կինս եւ ֆուտբոլը» ներկայացման մեջ գլխավորներից՝ ամուսնու դերը: Ոնց էի ուզում այդ մասին իմանային իմ հարազատ ծննդավայրում՝ Դաղեթ-Խաչենում (Թեթրիծղարոյի շրջան, Վրաստան): Հանկարծ իմացա, որ գալիս են Թիֆլիս՝ էքսկուրսիայի ու անպայման այցելելու են թատրոն: Հակառակի պես, հենց այդ օրվա ներկայացման մեջ զանգվածային դերերից մեկում էի: Պետք է պարզապես ճամպրուկները ձեռքս առնեի ու բեմի մի ծայրից մյուսը տանեի: Բախտս անիծում էի՝ հենց ա՞յդ օրը պետք է գայիք: Որքա՜ն էլ աղաչեցի-պաղատեցի ռեժիսորին, ինձ ներկայացումից չհանեց: Ճարս ի՜նչ... ճամպրուկներն առա ու դուրս եկա բեմ: Մեկ էլ ամբողջ դահլիճը ոտքի կանգնեց ու սկսեց բարձր ծափահարել... դրանք իմ ամենահիշարժան ու ազնիվ ծափահարություններն էին»:

ԻՍԿԱԿԱՆ ՈՒ ԱՆԻՍԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ...

Ու՞մ, եթե ոչ դերասանին է հատուկ այս բնութագրումը, ում պարագայում հաճախ դժվար է տարբերակել, ո՞րն է իսկականն ու անիսկականը: Ա.Բայանդուրյանի թատրոն-ընտանիքն այսօր 104 անդամ ունի, ուր ապրում է նաեւ նրա իսկական ընտանիքը...

- Թատրոն ընդունվելուց անմիջապես հետո,- պատմում է Ա. Բայանդուրյանը,- Հավլաբարի թիվ 93 հայկական դպրոցում հիմնեցի թատերական խմբակ: Լեյլան մի սիրունիկ ու աշխույժ աղջնակ էր՝ խմբակի առաջին ու ամենաակտիվ սանը: Հետագայում նա սովորեց Գյումրիի թատրոնին կից ստուդիայում, ապա՝ Թբիլիսիի թատերական ինստիտուտի հայկական բաժնում: Ամուսնացանք, ծնվեց Նարեկը: Նա, բառիս բուն իմաստով, մեծացավ թատրոնում՝ դահլիճում, բեմում, կուլիսներում... ապա սովորեց Թբիլիսիի թատերական համալսարանում եւ նույնիսկ տարիներ հետո մարմնավորեց նույն դերը, ինչ ես՝ Բաբս («Չառլեի մորաքույրը») ներկայացման մեջ: Այսօր Նարեկն ինձ հետ է, թատրոնում:

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԱԴԱՄՅԱՆԱԿԱՆԸ ԿԱՆՉԵՑ...

...Այնպես, ինչպես ցանկացած ընտանիքում, վիրահայոց թատրոնում եւս ծանր օրեր սկսվեցին: 1990-ականներին թատրոնից ու Թբիլիսիից հեռացան առաջատար դերասաններ Աիդա Բաբաջանյանը, Ալբերտ Սաֆարյանը, Վեներա Թարգյանը, Գագիկ Ադիլխանյանը, Մելանյա Բարսեղյանը, Ռոման Մաթիաշվիլին, Ռոբերտ Հակոբյանը... Առանց թատրոնը լքելու, ժամանակավորապես, Երեւանում հաստատվեց նաեւ Բայանդուրյան ընտանիքը՝ այդտեղ հիմնելով «Հավլաբար» թատրոն-ստուդիան եւ ընդգրկելով նշյալ դերասաններին: Այստեղ էին գործում նաեւ թբիլիսցի հայտնի նկարիչներ Մայիս Մխիթարյանը, Վալերա Բոյախչյանը: «Հավլաբարը» մասնակցում էր տարբեր փառատոների, խաղաց նաեւ Վիեննայում, ուր եւ բեմադրվեց «Ինքնանկարը»: Կարելի էր ենթադրել, որ ամեն ինչ առջեւում է, բայց... Բայանդուրյանն ասել է, թե՝ տուն դարձավ: Այն էլ ամենավատթար տարիներին՝ 1990 ականներին: 1995 թվականին ընտրվեց թատրոնի գեղարվեստական ղեկավար: Սովորեց Երեւանի համալսարանի հոգեբանության ֆակուլտետում եւ Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսուրայի բաժնում՝ թատերական անվանի գործիչ Վահե Շահվերդյանի կուրսվարությամբ: Նրա ջանքերով եւ թատրոնի երիտասարդ ռեժիսորներ Լեւոն Ուզունյանի ու Ռոբերտ Մանուկյանի մասնակցությամբ, թատրոնում բացվեց թատերական ստուդիա, ինչ-

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ՝ ՆՈՐԱՄՈՒՇՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ

64-ՐԴ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ՝ ԹԻՎ 104 ԴՊՐՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 17-ն է, ու կրկին հնչում է ավանդական առաջին զանգը, հնչում Վրաստանի բոլոր կրթական հաստատություններում, հնչում ու նոր կյանք, նոր ուղի ազդարարում:

Օրը հանդիսավոր է հատկապես հանրային կրթօջախներում, ուր դասարան առ դասարան մեծանում, ձեւավորվում ու կայանում են երկրի ապագա մանկավարժը, արհեստավորը, գիտնականն ու բժիշկը...

Թբիլիսիի թիվ 104 հանրային կրթօջախը իր դռները բացում է 64-րդ անգամ՝ սկսած 1954 թվականից: Վանքի դպրոցը, ինչպես թբիլիսցիներն են անվանում այս կրթօջախը, այսօր իր կանգունությամբ երկուսից մեկն է մինչեւ 2008 թվականը մայրաքաղաքում գործող 8 հայկական դպրոցներից: Ցավոք, հենց հայ ծնողի մեղքով: Մինչդեռ, իր կրթական որակով ու շրջանավարտների հետագա հաջողություններ ի ցուցանիշով դպրոցն այսօր էլ շարունակում է մնալ արժանիների ու օրինակելիների շարքում: Ու նաեւ արտաքին ու ներքին տեսքով: Այս տարի նույնպես դպրոցն իր 18 նորեկներին ու ուսումառող 300-ին դիմավորում է վերանորոգված դասասենյակներով, նորացված լաբորատորիայով, տեխնիկական հագեցվածությամբ, բուժկետով...

Դպրոցի բակում մայրենիով ուսումը սկսելու եւ շարունակելու, ըստ որում՝ առաջին դասարանից վրացերենն ու անգլերենը հավասարապես սերտելու ցանկությամբ եկած երեխաները եւ նրանց ծնողներն են, պատրաստական ու հարազատ մանկավարժները: Նաեւ ներկաներից յուրաքանչյուրին շնորհավորելու, քաջալերելու եկած հյուրերը. «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի ԿԳ նախարարության դեպարտամենտի նախկին պետ, վաստակաշատ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը, Վրացահայերի միության նախագահ Մարի Առաքելովան, ինչպես նաեւ Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ եւ դպրոցի ծնող Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը:

Ավանդական արարողությունը սկսվում է տնօրեն Իրինա Ժամկոչյանի ներկաներին ուղղված ջերմ խոսքով: Նա ուրախությամբ պատմում է ուսումնական նախորդ տարվա ձեռքբերումների մասին: Մասնավորապես, ընդգծում Հին Թիֆլիս թաղամասի դպրոցների շրջանում անցկացված «Կենսաբանություն» առարկայի մրցույթը, ուր հաղթանակած երեք աշակերտի թվում թիվ 104-ի 11-րդ դասարանի սան Լիանա Սադոյանն է, ապա խոսում է «Իմ առաջին համակարգիչը» պետական ծրագրի շրջանակներում դպրոցի 10-րդ դասարանի երեք աշակերտին շնորհվող համակարգիչների, ինչպես նաեւ վրացական բուհեր նախորդ շրջանավարտներից 5-ի անվճար ընդունելության մասին:

Հանդիսավոր միջոցառումը պսակվում է առաջին դասարանցի փոքրիկի ձեռքով հնչեցրած զանգով: Ու բացվում «Գիտելիքի օրը»՝ հերթական, թեեւ ամեն անգամ նոր ու անկրկնելի թվացող...

Շնորհավոր օրդ, շնորհավոր տոնդ, իմ հարազատ կրթօջախ:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԻՎ 103 ԴՊՐՈՑՈՒՄ

Նոր ուսումնական տարվա առիթով մայրաքաղաքի Իսանիի շրջանի Մետրոշինարարների թաղամասում գտնվող թիվ 103 վրաց-հայկական հանրային դպրոցն իր դռներն էր բացել սաների առջեւ:

Փուչիկներով զարդարված բակն աստիճանաբար մարդկանցով էր լցվում: Աշխույժ եռուզեռ էր. բարձր տրամադրությունը, կրկին տեսնվելու ցանկությունն ու միմյանց նկատմամբ բարի կամեցողությունը օրվա հրամայականն էին:

«Գիտելիքների օրվան» նվիրված տոնական միջոցառման մեկնարկը հայտարարեց ուսմասվար Նանա Շենգելիձեն: Տնօրեն Արչիլ Չխաիձեն ողջույնի խոսքում անդրադարձավ կրթօջախում տարվող աշխատանքներին, ձեռքբերումներին ու նոր առաջնահերթություններին: Նա աշակերտությանը հորդորեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել ուսման հանդեպ: Օրվա առիթով իրենց բարեմաղթանքները հավաքվածներին հղեցին Վրաստանի խորհրդարանի անկախ պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, դեսպանատան մամուլի, տեղեկատվության ու հասարակայնության հետ կապի բաժնի ղեկավար Հարություն Հայրապետյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: տողերիս հեղինակը, Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանը:

Հյուրերը եղան հաստատության հայկական բաժնի 9 հոգուց բաղկացած առաջին դասարանում, շփվեցին աշակերտների, ուսուցիչների, ծնողների հետ: Դեսպան Ռուբեն Սադոյանը կրթօջախին նվիրեց պրոյեկտոր, իսկ «Հայարտուն» կենտրոնի կրթության բաժնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը առաջին դասարանցիներին բաժանեց «Այբբենարան»-ներ:

Ելույթով հանդես եկավ դպրոցական երգչախումբը: Հուզիչ էին առաջին դասարանցիներ Լիլիանա Մգալոբլիշվիլու եւ Դավիթ Հարությունյանի արտասանությունները: Հանդիսությունն ավարտվեց Վրաստանի օրհներգով ու պետական դրոշի բարձրացմամբ, որին հաջորդեց հրավառություն:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ

ՀՈԲԵԼՅԱՆ

ԻՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՒ ԱՇԽԱՐՀՈՎ ԱՊՐՈՂԸ...

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

պես նաեւ հայկական կուրս՝ Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան թատերական համալսարանում: Բայանդուրյան բեմադրիչը հանդիսատեսի դատին հանձնեց ավելի քան 20 ներկայացում՝ Գ. Սունդուկյանի «Պեպոն», «Խաթաբալան», Վ.Շեքսպիրի «Օթելլոն», Գ.Նարեկացու «Մատյան ողբերգությանը», Ալ.Շիրվանզադե «Նամուսը», Նար-Դոսի «Սպանված աղավնին», Ն.Դումբաձեի «Մեղադրական եզրակացությունը», Գ.Խանջյանի «Գերեզմանատան երգչախումբը», Հ.Պարոնյանի «Պաղտասար աղբարը», Մ.Լադոյի «Սովորական պատմությունը», Ի.Վիլկվիստի «Այս գիշեր ոչ ոք չի քնելու»... եւ այլն: Նրանցից շատերն արժանացան լավագույն եւ առաջին մրցանակների, արվեստի երեւելիների կողմից բարձր գնահատականի:

ԱԴԱՄՅԱՆԱԿԱՆԸ ԵՐԿՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿՐՈՂ ՈՒ ԿԱՄՐՋՈՂ Է....

Հայ եւ վրաց մշակույթները զարգացնելու գործում զգալի ներդրում կատարելու համար Արմեն Բայանդուրյանը կրում է Վրաստանի «Պատվո շքանշանը», նաեւ Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացու» մեդալը, «Ոսկե դիմակ», «Բաբկեն Ներսիսյան» մրցանակները, ՀՀ թատերական գործիչների միության Ոսկե մեդալը... Նա Վրաստանի եւ Հայաստանի թատերական գործիչների միության վարչության անդամ է, Վրաստանի հայերի միության փոխնախագահ, Վրաստանի 7-րդ գումարման պատգամավոր:

- Կուզեի, որ թատրոնը ծառայեր ոչ միայն հայերին, այլեւ Վրաստանի ողջ թատերասեր հասարակայնությանը,- ասում է նա,- նրանց, ովքեր իրապես սիրում են թատրոնն ու տարբերում նրա գույնն արվեստում: Եվ ես հպարտ եմ, որ ծառայում եմ այդ նպատակին: Հայ թատերարվեստի նվիրյալներին ընկեր լինելով՝ ես մտերիմ եմ վրացի հանրաճանաչ ռեժիսոր, Թբիլիսիի Շ. Ռուսթավելու անվան պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբիկո Ստուրուայի, Գրիբոյեդովի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Ավթո Վարծիմաշվիլու, Թատերական գործիչների նախագահ Գիորգի Գեգեչկորու, մտերիմ էի Ռամազ Չխիկվաձեի, Սոսո Լաղիձեի, ով խաղաց «Մեղադրական եզրակացության» մեջ, Սոփիկո Ճիաուրելու հետ: Մեր ընկերությունը անձնականի ու գործնականի սահմանզատում չունի, մեկը մյուսին լրացնում են, մեկն առանց մյուսի գոյություն չունի: Ադամյանականը յուրովի կամուրջ է հայ ու վրաց թատրոնների միջեւ ու նաեւ երկու մշակույթի կրող...

Բոլորովին վերջերս,- շարունակում է Ա.Բայանդուրյանը,- Ռոբերտ Ստուրուան մեր տանը հյուրընկալվելով, խոստացավ թատրոնի շենքի բացումից անմիջապես հետո ներկայացում բեմադրել. «...Ես այդ ժամանակ 82 տարեկան կլինեմ, բայց տեսեք, թե ինչ եմ անելու»: Մենք էլ անհամբեր սպասելու ենք, ներգրավելով նաեւ վրացի այլ դերասան ու ռեժիսորների..

...165-ՐԴ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԸ ՆՈՐ ՇԵՆՔԻ՝ ՓՈՔՐ ՈՒ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ

Ըստ նախատեսվածի, թատրոնն իր նոր շենքի դռները կբացի 2020 թվականին, երբ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը կտոնի իր 165-ամյակը: Ըստ թատրոնի գեղարվեստական ղեկավարի, շենքի արտաքին տեսքը զգալի փոփոխության չի ենթարկվելու: Բայանդուրյանը պարզաբանում է, որ շենքի վերակառուցումը առավել ճիշտ ու նախընտրելի էր, քան վերանորոգումը, որն առավել երկար ժամանակ կպահանջեր: Այժմ թատրոնի հիմքում անընդհատ հավաքվող ջուրն ամբողջովին չեզոքացված է: Նա կիսում է անհամբեր հանդիսատեսի մտահոգությունը, բայցեւ վստահեցնում, որ շենքն անպայման իր նախկին առաքելությունը կունենա: Արդեն գարնանը, ըստ նախագծի, թատրոնի շենքը կհասցվի 4մ բարձրության:

- Կբարձրացվի եւս մեկ հարկ, ուր տեղակայված կլինի փոքր դահլիճը՝ 140 հանդիսատեսի համար,- ասում է Ա. Բայանդուրյանը:- Դե', իսկ մեծ դահլիճը նույնն է՝ 570 տեղ: Շատ գեղեցիկ ու ժամանակակից է լինելու ներսում: Դահլիճները կունենան օթյակներ: Ամբողջովին վերափոխվում է լուսավորումը, տեխնիկան, բեմը՝ իր կենտրոնական մասի պտտվելու հնարավորությամբ: Կունենանք դիմահարդարման նոր սենյակներ, հանդերձարան, հյուրասենյակներ, ուր նաեւ գիշերելու հնարավորություն կունենան արտերկրից հրավիրվող դերասանները, սրճարան, որ կգործի ներկայացման օրերին... եւ, որ ամենակարեւորն է, ջեռուցում, ինչը հնարավորություն կընձեռի ծավալել շուրջտարվա գործունեություն:

Կուզեի, որ թատրոնում հանդիսատեսի թիվը շա՜տ ու շատ լիներ: Թատրոնը թանգարան չէ, որ գաս, դիտես ու գնաս, թատրոնը կենդանի օրգանիզմ է: Այն կարիք ունի խրախուսման, առողջ քննադատության, ծափահարության... Որքան շատ աշակերտ հայկական դպրոցներում, այդքան շատ հավատացյալ եկեղեցում, հանդիսատես՝ թատրոնում, թերթի լույսաշխարհ գալուն անհամբեր սպասող ընթերցող: Այլ կերպ հնարավոր չէ...

Թատրոնի երկարասպաս բացումը լի է անակնկալներով: Ըստ գեղարվեստական ղեկավարի, թատրոնում պարբերաբար կխաղա նաեւ դերասանական այն բույլը, որ Երեւանում է գործում՝ Աիդա Բաբաջանյան, Ալբերտ Սաֆարյան, Վեներա Թարգյան, Գագիկ Ադիլխանյան, Գեորգի Հովակիմյան, Ռոբերտ Հակոբյան... իսկ թատրոնի գլխավոր նկարիչը լինելու է ճանաչված նկարիչ Մայիս Մխիթարյանը:

Այս ամենը իսկապես սրտի թրթիռով սպասելու մեծ առիթ է տալիս... եւ, երեւի, ամենից շատ Արմեն Բայանդուրյան նախեւառաջ թատրոնով ու թատրոնի մեջ ապրողին, որովհետեւ թատրոնը հենց նրա աշխարհն է: Աշխարհ, որի հիմքում սերն է, հույզը, ապրումը, նահանջն ու... հաղթանակը:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ՝ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ

ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-ին «Առաջին զանգը» հնչեց Ախալքալաքիի մունիցիպալիտետի բոլոր 65 դպրոցներում՝ ազդարարելով նոր ուսումնական տարվա սկիզբը:

Նոր ուսումնական տարին բոլոր դպրոցներում սկսվեց կազմ ու պատրաստ: Մունիցիպալիտետում սովորող մոտ 700 առաջին դասարանցիներ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից ստացան անհատական համակարգիչներ: Մունիցիպալիտետի բոլոր դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտներն ապահովվեցին դասագրքերով: Մոտ օրերս կլրացվի նաեւ մյուս դասագրքերի պակասը, այդ թվում՝ նաեւ հայկական դպրոցների «Մայրենի լեզվի եւ գրականության» դասագրքերինը: Բոլոր վրացական դպրոցներում բաժանվեց նոր գրիֆ շնորհված 1-6-րդ դասարանների դասագրքեր, որոնք լիովին համապատասխանում են ազգային ուսումնական պլանի չափորոշիչներին: Ընդգծեմ նաեւ, որ դպրոցների մեծ մասում կատարվեցին վերանորոգման աշխատանքներ:

Խորին շնորհակալություն եմ ուզում հայտնել «Վրաստան» թերթի խմբագրությանը, որ ամեն տարի այս գեղեցիկ հնարավորությունն է ընձեռում նոր ուսումնական տարվա կապակցությամբ իմ ջերմ շնորհավորանքներն ու թերթի միջոցով բազմահազար ընթերցողներին բարեմաղթանքներն ուղղելու համար:

Եվ նոր ուսումնական տարվա կապակցությամբ, նորից դիմում եմ ձեզ.

- Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, ծնողներ...

Շնորհավորում եմ բոլորիդ նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ: Հաջողություն եմ մաղթում բոլորիդ դպրության ու գիտության դժվարին, բայց միակ ճշմարիտ ճանապարհը հաղթահարելու գործում՝ ցանկանալով նվաճումներով ու խինդով լի ուսումնական տարի:

Բոլոր ծնողներին ցանկանում եմ իրենց երեխաներով բազմիցս հպարտանալու առիթներ, բոլոր ուսուցիչներին՝ աշխատանքում անմնացորդ նվիրում, անսասան կամք ու առողջություն:

Առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ բոլոր առաջին դասարանցիներին:

Սիրելի առաջին դասարանցիներ, ցանկանում եմ, որ ձեր ամբողջ կյանքում պահպանեք այն մաքրությունը, որն այսօր կա ձեր հոգիներում: Ցանկանում եմ, որ ձեր ուսումնառության տարիների ընթացքում ձեռք բերեք հիմնավոր գիտելիքներ, որպեսզի ճիշտ կերտեք ձեր ապագան եւ մեր բարեկեցիկ վաղվա օրը: Թող արեւի ճառագայթներով ողողվի յուրաքանչյուրիդ այգաբացն ու լուսավորի դեպի մեծ կյանք տանող ճանապարհը:

Ապրեք խաղաղությամբ եւ առողջ...

ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ

Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի ղեկավար

Նկարում.- Թերեզա Չիվչյանը՝ Մեծ Սամսար գյուղի առաջին դասարանցիների հետ:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ

Սեպտեմբերի 17-ին Նինոծմինդայի մունցիպալիտետի բոլոր հանրային դպրոցներում, ինչպես ողջ Վրաստանում, մեկնարկեց նոր՝ 2018-2019 ուսումնական տարին:

Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ «Վրաստան» թերթի միջոցով առաջին հերթին ջերմորեն շնորհավորել նոր ուստարվա մեկնարկը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրային դպրոցների ուսուցիչներին, աշակերտներին, ծնողներին եւ, իհարկե, առաջին դասարանցիներին, ովքեր սեպտեմբերյան այդ օրը առաջին անգամ հանդիպեցին իրենց ուսուցիչներին: Առանձնակի շնորհավորում եմ շրջանավարտներին, ովքեր ուսանողի կարգավիճակով ուսումը շարունակում են Վրաստանի տարբեր բուհերում, նրանց մաղթում հաջողություն եւ հետաքրքիր հեռանկար:

Նախորդ ուսումնական տարվա 38 հանրային դպրոցների 283 շրջանավարտի դիմաց, այս ուսումնական տարում առաջին դասարան ընդունվեց 318 աշակերտ:

Նշենք, որ նախորդ տարվա 283 շրջանավարտներից 61-ը քննությունները հանձնել են էքստեռն կարգով, եւ շուրջ 161-ն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն:

Ուստարվա մեկնարկը միշտ եղել է տարվա նշանակալի իրադարձությունը, ուստիեւ առանձնահատուկ վերաբերմունք ունենք այդ օրվա նկատմամբ, քանի որ դրան ուղեկցում է ուսուցիչների վիթխարի էներգիայի կենտրոնացումը, կրթություն ստանալու հարցում աշակերտների տրամադրվածությունը, ծնողների սպասելիքները, որ նոր ուսումնական տարին է՛լ ավելի հուսալի հիմքեր կստեղծի ապագա սերնդի համար:

Նոր ուստարվա համար սեփական միջոցներով վերանորոգման աշխատանքներ են տարվել մունիցիպալիտետի 13 հանրային դպրոցներում: Իսկ ինչ վերաբերում է հանրակրթական եւ գիտական ենթակառույցների զարգացման գործակալություն ՀԻԻԱ-ին մունիցիպալիտետի կողմից առաքված երեք դպրոցների վերանորոգման նախագծին, որը նախատեսված էր 2018 թվականի համար, կիրականացվի 2019 թվականին:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ

Նինոծմինդայի քաղաքապետ